ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արգել համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արգել, 093-168-468 argel.gjuxapetaran@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2020 թվականի N 73

ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ԹԻՎ 13 ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 23 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հաշվի առնելով Կոտայքի մարզպետի 2020 թվականի ապրիլի 20-ի թիվ 01/08.1/02719-2020 գրություն

որոշում եմ

1. Արգել համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 30-ի «2020 թվականի հունվարի 27–ին կայացած մրցույթում հաղթող Սարգիս Հրաչիկի Բաբայանի հետ հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրման պայմանագիր կնքելու մասին» թիվ 13 որոշման հղման մեջ ավելացնել << հիմք ընդունելով այն հանգամանքը կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասը համարվում է Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս >> բառերը:

2. Արգել համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 13-ի «Կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիրը դադարեցնելու մասին» թիվ 23 որոշման հղման մեջ << Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մաս >> բառերը փոփոխել և լրացնել << Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի>> բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ